

Երեւոյի Բնակչութեան Դիմումները :

Երեւոյի Բնակչութեան Դիմումները 1826ին արդուացի ջրհոր մը կը փորէին որ աղի ջուր գտնեն . 200 ոտք խորութի հասնելէն ետեւ՝ ապառաժ քարի մը հանդիպեցան փորողները . ան քարը ծակելուն պէս՝ մէյմալ տեսնեն որ ջրի տեղ մաքուր եղցատքեց տակէն՝ գետնին երեսէն 12 ոտնաչափ բարձր : Եւ թէպէտ ցատքելուն սաստկութիւնը քանի գնաց պահսեցաւ, բայց օրերով չդադրեցաւ աղբիւրը : Եւ ջրհորին քովերը ջրի առու մը կայ՝ որ Վոլմայերլանտ անունով գետը կը թափի . ուստի ան նոր բխած եղը խառնուեցաւ ան ջրին հետ, ու ինչուան հեռու տեղուանք ջրին երեսը լողալով կը վազէր : Եւ կողմի բնակիչները ուղեցին փործել թէ աս նոր տեսակ եղը հասարակ կուպրի կամ ձիւթի՝ պէս կը վառի թէ չէ . առին ջահ մը մտնեցուցին եղին, մէկէն բռնկեցաւ կայծակի պէս, ու բոլոր գետը կարծես թէ կրակ դարձեր կը վազէր . մէկ դիէն ալ բոցը ինչուան թումբերէն վեր ու ծառերուն վերի ծայրերը ելելով ու բռնկեցնելով՝ շատ մեծ վախ ձգեց բնակիչներուն սիրտը :

Երաւցընէ աս եղը կամ կպրածիւթը խիստ դիւրավառ է, և լոյսը անանկ մաքուր ու պայծառ է որ կազի լոյսէն տարբերուի չունի : Եւրկայ քանի մը պզտի տակառներու՝ մէջ գոցեցին որ պահեն . տեսան որ քիչ մը ատենէն առջինէն աւելի ջրի ու բարակ եղեր է, և տակառներէն դուրս քամուեր ելեր է, անանկ որ բան չէ մնացած անոնց մէջ : Եւ որ համար փայտէ ամաններու մէջ խիստ դժուար կը պահուի . անկէ զատ՝ այնչափ ցնդական է, որ շատ անգամ նաւերու մէջ դրուած ատենը կը ճաթեցընէ զանոնք՝ թէ որ ամաններուն մէջ սաստիկ գոցած

ըլայ : Գոյնը կանաչ է, բայց օդ առնելով աւելի թխագոյն կը ըլլայ . հոտը անախորժ է, և համը սև ձիւթի՝ համին քիչ մը կը նմանի :

Եւ հանքային եղը երբոր ջրհաններով՝ կը հանէին, երկար ատեն աղի ջրին հետ մէկտեղ ելաւ . ասկէ յոյս առին բնապատումները թէ աս օգտակար աղբիւրը պիտի չհատնի, և սկսան աւելի փործեր ընել որ դիւրին ու առատ հանեն, բայց ջանքերնին անօգուտ ելաւ . վստի միայն ատեն ատեն կը բխէր : Եւ տարուան մէջ երկու անգամ հանդիպեցաւ որ առատութիւն ժողովեցին . երկրորդ անգամը սկսաւ 1835ին, յուլիսի չորսին, գրեթէ 6 շաբաթ քչեց, ու քսան պզտի տակառ եղ ելաւ : Եւ ինչու ատենը խորութիւն ձայն մը կը լսէ որոտմունքի նման, ու ջրհանին վերի կողմերը ջրին երեսը կը սկսի փայլիլ, անանկ որ կարծես թէ բոլոր ջրհորը բռնկեր է :

Եւ կարգէ դուրս գիւտին լուրը իմաստնոց ականջը հասածին պէս ձայն ելաւ թէ ան եղը զարմանալի բժշկական զօրութիւններ ունի . ուստի զանազան փործեր ալ ըրին, ու գէթ ոմանք հաստատեցին թէ իրաւցընէ օգտակար դեղ է հարբուխի, բարակ ցաւի, աղեաց ցաւերու, դժուարամարսութեան, ճեղքուածքի, վերքի, և ընդհանրապէս ամէն տեսակ մորթի հիւանդութեանց դէմ . և անանկ զօրաւոր է որ վերքի մը ցաւը հինգ վայրկեանէն կանցընէ կըսեն :

ԱՋԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Սոսրապէան վարժարանին պարտէան հետեւի լինել :

ՊԱՏՈՒԱՅԻ Սոսրատեան վարժարանին ալ տարեկան քննութիւնները լմննալէն ետեւ, անցեալ ամսուն 28ին

պարգևաբաշխութեան հանդէսը եղաւ սովորական արարողութեամբ¹ : Փութաջան և ընտիր աշակերտները աս տարի ալ, որ իրենց աշակերտութեան չորրորդ տարին է, մեծ յառաջադիմութիւն ցցուցին բնաբանական, բանասիրական, տնտեսական, բարոյական և լեզուագիտական ուսմանց մէջ, և նկարչութեան գեղարուեստին կողմանէ . ուստի նաև արժանապէս գովեստ ու քաջալերութիւն լսեցին ամէնէն :

Իսկ իրենց գլխաւոր վարժապետը նոյն հանդիսին ժամանակը զօրաւոր ատենախօսութիւն մը ըրաւ, որուն իմաստը ան էր՝ թէ ինչ սկզբանց վրայ պէտք է հաստատել տղոց բարոյական կրթութիւնը որ երբոր սկսին ընկերական կենաց մէջ մտնել ու մարդկանց հետ վարուիլ, թէ իրենք իրենց և թէ ուրիշներուն օգտակար ըլլան : Սա մանաւոր կերպով հաստատեց աս իմաստասիրական գեղեցիկ սկզբունքը թէ մարդս ոչ երբեք կրնայ ըլլալ լստուծոյ հաճոյ և մարդկանց սիրելի՝ ինչուան որ միտքը չդնէ թէ ամէն մարդ տկար է, ամէն մարդ սխալական է, և ամէն մարդ բարին կրտսեր է . բայց անաչառ կերպով պէտք է քննէ ու իմանայ իր յօժարութիւններուն ծռութիւնը, որպէս զի չըլլայ թէ միտքը դնելով թէ ինքը բարեսէր է՝ իրօք չարասէր ըլլայ :

Լսենախօսութենէն ետքը պարգևաբաշխութիւնը եղաւ . և առաջին մրցանակին արժանաւորները՝ իրենց յառաջադիմութեան կարգովը ասոնք են .

ԱՆՏՈՆ ՍՕՓԵԱԼԵԱՆ
ԳԻՈՐԳ ՀԱՃԻՍՏԵՓԱՆԵԱՆ
ՅՈՎՍԷՓ ԳԱՀՎԷՃԵԱՆ
ԱՆՏՈՆ ԱԼԱՆԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻՔԹԱՇԼԵԱՆ

¹ Տես օրագրիս 287 երեսը :

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Ս՚հետեւիս հետեւեալ ջարդելու հարց :

ՏՆԵՐՈՒՆ ու ցորեննոցներուն մրկները ջարդելու համար ինչուան հիմա գործածուած հնարքը մէյմը տեսակ տեսակ ակնատներն¹ են, մէյմը կատուն, մէյմըն ալ մկնդեղի² պէս թոյներ, ինչպէս որ ամէնուն յայտնի է : Լս տարիներս Պերենցի անունով իտալացին նոր հնարք մըն ալ գտաւ որ հասարակ ակնատէն դիւրին է, ու զանազան թոյներուն վտանգը չունի : Ս՚ուկ բռնելու ակնատի մը յատկը հայլի մը կրդնէ . երբոր մուկը ակնատին մօտենայ, անոր մէջ իր կերպարանքը տեսնելով կարծէ թէ մէջը ուրիշ մուկ մըն ալ կայ, մէկէն սիրտ կրնէ ներս մտնելու և կրբռնուի :

Երբ լստալացին մուկներու գէմ ալ դեղ մը գտաւ որ խիստ դիւրին ու փորձուած բան է : Լս մէկ մասս սև ձիւթ³, ու իրեք մասս Ս ենետիկի բեկկնի խէթ⁴ . աս երկուքը մեղմ կրակի վրայ հալեցուր, ու պաղելէն ետքը չորս մասս ռեռնի ոգիքին⁵ մէջ լուծէ, որ կըլլայ տեսակ մը վերնիճ : Լս վերնիճով թէ որ մուկներուն բոյները կամ տախտակներուն ճեղքերը օծելու ըլլաս, օդ չեն կրնար առնել ու կըջարդուին : Լս վերնիճը ամենեւին գէշ հոտ ալ չունի, և կահ կարասիքները աւելի ամուր ու հաստատ կըլլան :

1 Գաթան :

2 Սլան օլնո :

3 Թահապոթի :

4 Ջիֆի :

5 Թիւրեմի :

6 Իտ. Acqua regia.